

Աւ դարձեալ գրել եւ կազմել երես Տը երէցփոխանն . Ան գինքն նորոգէ իւր արքայութեանն

Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, որ ազատեաց ի ձեռնաց անօրինաց զոր աւետարանս զայս եւ վերստին նորոգել հառուր Եւ եւ յիշատակ ի գոռն սը հրշտոյ եւ Միքայէլի վերստին նորագել հառուր զսը աւետարանս ի թվին ՌՃԲ մայիսի ԺՁ . . .



Կ Ա Ր Ա Պ Ե Տ Ե Ջ Ե Ա Ն

(Շար. եւ ղերջ)

Այժմ անցնինք Կ. Եղեանի գլուխ - գործոցին՝ գլխաւոր աշխատասիրութեանը . Դա ոսերէն լեզուով գրուած «Պետրոս Մեծի յարաբերութիւնները հայ ժողովրդի հետ» գիրքն է, որը մեծահաղորդ հետախուզական-սլատմական յիշատակարան է, տպուած Պետերբուրգում 1898 թ. համաձայն կարգադրութեան Գիտութեանց Ճեմարանի . Աշխատութեան տնային կէտը պատմական տեսութիւնն է գլխաւորապէս Մեծն Պետրոսի յարաբերութեանց հայ ժողովրդի հետ, իսկ երկրորդը՝ վաւերացողքներ են եւ արձանագրութիւններ, գրադրութիւններ եւ հրովարտականքներ, որոնք հանուած են Մոսկուայի գլխաւոր եւ Պետերբուրգի Ռուսաքին գործոց նախարարութեան գիւտանքից, Աւետրիական պաշտական եւ արքունի գիւտանքից, Բաւարիոյ դադանի արքունի գիւտանքից եւայլն եւայլն . Այս վաւերացողքները տպուած են իրենց սկզբնական ձեւով, բնագիրներով, հայերէն, ռուսէն, գաղղիերէն, գերմաներէն, պարսկերէն եւայլն . 1897 յունուար 8-ին իր այս գործը զեկուցեց կայսերական գիտութեանց ճեմարանի պատմական-բանասիրական բաժնին .

Հանգուցեալը տնգամ էր եւ թղթակից անդամ ուսական եւ եւրոպական գիտական ընկերութիւնների, եւ վարձատրուած էր այլ եւայլ պետութեանց եւ գլխաւորապէս ռուսական շքանշաններով .

1904 թ. նոյեմբեր 6-ին Պետերբուրգում տնուկեցաւ նրա պետական ծառայութեան եւ գրական գործնէութեան 50ամեայ յօրեւեանը, որի առթիւ եւ ոտացաւ Իսկական գաղանի խորհրդականի աստիճանը .

Մի քանի խօսք էլ Մանասարեան գպրոցի խնամակալ-հոգաբարձու լինելու մասին .

Մանասարեանը իրեն կտակակատար էր կարգել ի թիւս միւսների եւ գլխաւորապէս Եղեանին . Հանգուցեալը գպրոցի վրայ հակում էր արդէս արթուն հովիւ եւ դեռ 1886 թ. ամառը զնաց կարին եւ տեղնու-

տեղ վերանասու եղաւ դպրոցի բարգաւաճման գործին : Նա այնտեղ հնար
ունեցաւ ծանօթանալու դասաւանդութեան եղանակի հետ եւ տալով կա-
րեւոր հրահանգները , վերադարձաւ Պետերբուրգ եւ մինչեւ իր մահը
չը դաւանանից ախրած գործին : Նա մի ժամանակ նոյն իսկ խորհուրդ էր
տալիս աւսուցիչներուն վարչութեանը , որ տոմսկան գրականութեան ,
լեզուին եւ պատուութեան վերաբերեալ առարկաները գրաբար աւան-
դուին : Այս պահանջը բնական էր , որովհետեւ ինքը գրաբարեան էր եւ
պահպանողական , նախանձախնդիր հայրենի խօսքի , բայց այնուհետեւ-
նիւ վերջերս նա այդ հարցումը չէզոք մնաց , եթէ դպրոցի « նախական
կամ կրթական » եւ է հարց պէտք էր զննուի , առանց նշանի անկա-
րիի էր որովհետեւ կտակով նա պէտք էր հաստատուի թուրք վճիռները :
Դպրոցի պահպանման գումարը պահուում էր Պետերբուրգի դրամատան ,
բայց նա աւելի ապահով լինելու համար գումարի կիսով մի տուն զննել
տուեց Կ. Պօլսում , որի եկամուտը յատկացուած է դպրոցին : Այս իսկ
պատճառով Կ. Պօլսում ընդ հսկողութեամբ սրբազան պատրիարքի , որը
եւ նախագահն է , կազմուեցաւ խնամակալութիւն , որոնք ճանաչուած
են եւ իրեւ հոգաբարձու վարժարանի : Այդ խնամակալութեան նախ-
անգամն է Դաբրիէլ էֆ. Նորատուեղիանը , գանձապետ՝ Պատրիկ էֆ. Կիւլ-
պէնիկեանը , անդամներ՝ Աբիկ Ունճեան , Գէորգ Ասլանեան , Դրիգոր Կիւ-
միւ , չլիբտան եւ Վահան Էսաեան էֆէնտիները , իսկ օժանդակ անդամներ՝
Արշակ Գարալիօղեան եւ Հրանտ Ասատուր էֆէնտիները :

Երեւի Կ. Եղեանի մահուամբ թուրք գործերի ընթացքն ու խնամ-
քը այս խնամակալութեան կանցնի :

Մայիսի 30-ից լույս 31-ին Պետերբուրգում կնքեց իր մահկանացուն
այս բազմաշխատ վաստակուորը : Նրան ճանաչողները շատ արիստա-
ցին , բայց մի՞թէ մեր մէջ կան մարդիկ , որոնք չը ճանաչեն : Ամենքի
ցանկութիւնն էր թողել նրան անզուգական բարեկամը կողքին՝ Տրփ-
խսում Մ. Մանասարեանի գերեզմանի մօտ , բայց ներկայ ձախող հան-
գամանք՝ երբ խանգարեցին այդ , թէպէտեւ ասում են որ վեհաժող կա-
թողիկոսը հրամայել է չլինքել հանգուցելոյն գերեզմանը , որպէսզի
ապագայում տեղափոխեն մարմինը Տփլիս : Պետերբուրգում յուղա-
կաւորութեան ներկայ են ելել նախարար Գլազովը եւ շատ ուրա ու
հայ թորձրաստիճան գիւղուորական ու քաղաքական պաշտօնեաներ :
Նաեւ Տփլիսի քաղաքագլուխը Մարմինը տարուել է Մասկուա եւ ներ-
կայութեամբ Նախիջեւանի եւ Բեսարաբիոյ առաջնորդ Նեքուէս արքե-
պիսկոս Եղուղալիդիանի , բազմաթիւ հասարակութեան ու պաշտօնէու-
թեան՝ հողի յանձուել , Եղեանները տոմսկան գերեզմանատանը , յու-
նիս ամսի հին :

Կ. Եղեանը մեռած ամուրի եւ թողեց մի հարուստ մա-

տենագարան, որ, ինչպէս ասում են, Լեջովանի մասենագարանին է նուիրել, եւ 200 հազար ռուբլի էլ գրամով Երեւ 1896 թ. նա աւելցել է մի կտակ, որով իր կարողութիւնը կտակած է եղել այս ու այն հաստութեանց, բայց ինչպէս երևաւ այժմ, այդ կտակը եղծել է հանդուսնալը եւ ոմանց ասելով կարողութեան մեծ մասը Սանասարեան զըպրոցին է կտակուած :

Եւ համառօտակի տուի հանգուցեալի կեանքի նկի յագիրը, բայց չի նշանակում թէ զրեցի կենսագրութիւն Է Հանգուցեալի մասին Կենսագրական տեղեկութիւնները եւ ձեռք հիմ թրեւ այս ու այն ցան ու ցրիւ եղած ազդիւրներինց եւ կամ թէ նրան ճանաչողներինց, որովհետեւ հանգուցեալ Եղեանը իր կենդանութեան ժամանակ հակառակ էր իր մտին որ եւ է կենսագրական տեղեկութիւն տալու :

« Կենսագրութիւնը գրում են միայն մօտից յետոյ » ահա նրա խօսքերը :

« Մեռաւ արդարեւ եւ թող զղումն յոյժ, և եւ ով է այն մարդը, որ չըպէտք է օրհնէ նրա յիշատակը... »

Հ. ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԻԱՆԵ



ԿՐՕՆԱԿԱՆ ԱՂԱՆԴ ՄԸ ՓՈՐՈՒ ԱՍԻՈՅ ՄԷՉ

ԳՐԶԸԼ-ՊԱՇՆԵՐԸ

Գըղըլ-պաշները կը հաւատան քրիստոնեաներու պէս, որ Աստուած երեք անձնաւորութիւն ունի եւ մէկ է : Կը թուի որ իրենց համար Ալին՝ Հօր երկրային ներկայացուցիչն է, ինչպէս Յիսուսը՝ Որդւոյն : Անոնցմէ ոմանք ինձ ըսին թէ Մուհամմադ Մուրթ Հոգիին՝ Բարաքլէի՝ անձնաւորութիւնը կը նկատեն : Բայց երբ զիրենք ստիպեալ անմիջապէս կը խոստովանին թէ Մուհամմէտի հանդէպ ունեցած յարգանքներն պարզ ձեւակերպութիւն մըն է, թէ իրականութեան մէջ զայն ո՛չ Աստուած կը ճանչնան, ոչ մարգարէ, եւ թէ Դուրանը երբեք չեն կարդար :

Կը հաւատան թէ Մարիամ Աստուծոյ մայրն է, եւ թէ նա յղափառ առանց զայրերիւ կոյս ըլլալէ, աստուածային կամքի ներգործութեամբ : Մեծ Զերմեռանդութիւն ունին անոր համար, եւ ի պատիւ անոր կ'արդասանեն տեսակ մը մաղթանք :